
ԲԱՅԱԿԱՆ ՀԵՏԳՐԱԲԱՐՅԱՆ ԳՈՅԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԻԼԻԿՅԱՆ ԲԱՐԲԱՆՆԵՐՈՒՄ

Գ. Կ. ՀԱՆԱՆՅԱՆ

Հայ բարբառագիտության մեջ կիլիկյան տարածքների բարբառային միավորների առանձին կողմերի նկարագրություններ և նմուշներ ներկայացվել են դեռևս 19-րդ դարի վերջերին «Բիւրակն»¹ և «Հանդէս ամսօրեայ»² պարբերականների էջերում: Սակայն դրանցից միայն Չեյթունի, Սվեդիայի, Քեսաբի, Արամոյի, Հաջընի³ բարբառներն են առանձին, ամբողջական քննության ենթարկվել բանասեր ուսումնասիրողների կողմից:

Երբեմն գուգադրաբար ներկայացվել են նաև այս և որոշ հարևան բարբառների բառապաշարի, քերականական կառուցվածքի, հնչյունական առանձնահատկությունների ինչ-ինչ կողմեր: Սակայն ուսումնասիրողներից ոչ բոլորն են անհրաժեշտ ուշադրություն դարձրել հատկապես բայական համակարգի այս առանձնահատկություններին, որ բնորոշ են նկարագրվող տարածքի բարբառային միավորներին:

Բացի բուն կիլիկյան՝ Չեյթունի, Հաջընի, Մարաշի բարբառներից, մեր քննության մեջ ներառում ենք նաև Սվեդիա-Քեսաբ խմբի, ինչպես և Բեյլանի բարբառները, քանի որ բարբառների այս խմբավորությունը, ինչպես Աճառյանն է դեռ նշել ժամանակին, կազմում է բարբառների մի միություն, որ կարելի է ընդհանուր անվանումով կոչել *կիլիկյան բարբառներ*⁴:

Այստեղ գուգադրաբար կներկայացնենք բայական համակարգի հետգրաբարյան գոյացությունները և սրանց ձևակազմական առանձնահատկությունները:

Բայը քերականական կարգերով և հարացուցային ձևերով ամենահարուստ բառախումբն է: Դա պայմանավորված է խոսքի, հաղորդման մեջ ունեցած նրա բացառիկ դերով (անվանում, նշանակում է իրողությունը, երևույթը, արտահայտում է շարժումը տարածության ու ժամանակի մեջ, հաղորդող սուբյեկտի վերաբերմունքայնությունը և այլն):

Բայական հատկանիշներից առաջնային են նրան ներհատուկ և ինքնակա քերականական կարգերը՝ *տիպարը* և սրա մասնակի դրսևորումը հանդիսացող *սեռը, կերպը, ժամանակը*: Սրանք հատուկ են բայի բոլոր ձևերին:

Եղանակը, դեմքը, թիվը հաղորդակցային, իրադրական արժեք ունեն և մասնավորում են գործողությունը ըստ հաղորդող-ընկալող եզրերի զանազան հարաբերությունների: Այս հատկանիշների մեջ յուրահատուկ իմաստավորում է ստանում քերականական ժամանակի կարգը, որը մի կողմից ներհատուկ է բուն գործողությանը

¹ Տե՛ս «Բիւրակն», Պոլիս, 1898-1900թթ.:

² Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1896, էջ 43-45, 113-114, 229-232:

³ Տե՛ս Ա. Ղարիբյան, Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ, Եր., 1959, Տ. Անդրեսայան, Սվեդիայի բարբառը, Եր., 1966, Հ. Գասդարյան, Հաջընի բարբառը, Եր., 1966, Հ. Չոլաբյան, Քեսաբի բարբառը, Հալեպ, 1986, Գ. Հանանյան, Սվեդիայի բարբառը, Եր., 1995, Հր. Աճառյան, Քննություն Կիլիկիայի բարբառի, Եր., 2003:

⁴ Տե՛ս Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 9:

(իրբև երևույթի, իրողության շարժում, հաջորդելիություն), մյուս կողմից այն իրադրական արժեք է ստանում, երբ որոշակիանում է հաղորդման պահի հետ ունեցած հարաբերությամբ: Ժամանակի քերականական կարգի մեջ ինչ-որ չափով առկա է սուբյեկտիվ-վերաբերմունքային իմաստ:

Ջահուկյանը կերպի մեջ ներառում է գործողության, եղելության քանակական բոլոր դրսևորումները՝ եզրայնություն–ոչ եզրայնություն, տևականություն–ոչ տևականություն, միակատարություն–բազմակատարություն հակադրություններով⁵:

Տիպարը գործողության և նրանում ընդգրկված առարկաների փոխհարաբերությունների դրսևորումն է՝ անանցողականություն–անցողականություն ենթակարգերով: Սեռը, որը անցողականության ենթակարգի դրսևորումներից է, արտահայտում է գործողության և նրա օբյեկտի փոխհարաբերության ներկայացման տարբերությունը. սրանով էլ այն մասնակիորեն ստանում է իրադրական արժեք, նաև՝ ոճական որոշ երանգավորում:

Արտահայտության պլանում բայական կարգերից *տիպարը, սեռը, կերպը, ժամանակը* բարբառներում տարածություններ գրեթե չեն դրսևորում: Մրանց արտահայտման ձևաբանական միջոցները ընդհանուր հայերենյան են:

Դեմքի, թվի, եղանակի կարգերը բայական բուն իմաստներից դուրս, ոչ ինքնակա և ոչ առաջնային, այլ հաղորդակցային, իրադրական արժեք ունեն և հատուկ են միայն դիմավոր ձևերին: Բայական դիմանիշ և թվանիշ ձևայինները ևս հիմնականում նույնական են ընդհանուր հայերենի համապատասխան միջոցներին:

Ձևերի բազմազանությամբ բարբառներում հանդես է գալիս բայական եղանակի կարգը, ուր առավել որոշակի է դրսևորվում հաղորդողի սուբյեկտիվ վերաբերմունքը, իրականությանը տվյալ գործողության համապատասխանելիության նրա գնահատականը:

Բայական եղանակավորումը կատարվում է հատուկ ձևայինների կամ այդպիսի արժեք ստացած բառ-մասնիկների միջոցով, որոնք տարբեր բարբառներում տարբեր արժեքով են հանդես գալիս:

Խոնարհման համահայկական ձևերից բացի՝ բարբառները ստեղծել են նաև նոր ձևեր ու միջոցներ՝ որոշակիացնելու համար գործողությունները, եղելությունները ըստ իրականության հետ համապատասխանելիության (հաստատում-ժխտում), ըստ հաղորդման պահի հետ ունեցած հարաբերության (ժամանակային որոշակիացում):

Բարբառային նորակազմություններ են կիլիկյան տարածքների *բուն և շարունակական ներկա, անկատար անցյալ, ապառնի, անցյալ ապառնի* ժամանակաձևերը սահմանական եղանակի հարացույցներում, *պատմողական, պատվիրական հրամայական, կարողական* եղանակները, ժխտման յուրահատուկ դրսևորումները:

Գրական արևելահայերենի եղանականիշ բուն մասնիկներ Ջահուկյանը դիտում է *կ-ն* և *չ-ն*, որոնք հարացուցային որոշ ձևերում կարող են նույն դիրքում հանդես գալ, որոշ ձևերում միայն *չ-ն* կարող է գործառել, որոշ ձևերում էլ՝ ո՛չ մեկը, ո՛չ մյուսը (կգամ-չգամ, կասեմ-չասեմ, եկա-չեկա, ասացի-չասացի, եկ/արի՛-ասա՛):

Ասեմ, գնամ, տամ, սիրեմ, սիրի, մոտենամ, տա/տուր, մոտենա/մոտեցիր ձևերը առանց հատուկ նշույթավորման (հատուկ հնչերանգ՝ տու՛ր, մոտեցի՛ր, լրացուցիչ նախամասնիկներ, բառ-մասնիկներ, եղանականիշ բառեր՝ կտամ, կմոտենամ,

⁵ Տե՛ս **Գ. Բ. Ջահուկյան**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 244-264:

պիտի տամ, պիտի մոտենամ, թող տամ, թող մոտենամ, երանի տամ, երանի մոտենամ) երբեք չեն կարող հանդես գալ: Այս բոլոր ձևերն էլ արտահայտում են կատարելի գործողություններ՝ *անորոշ եղանակավորումով*:

Հայտնի է, որ պատմական զարգացման ընթացքում տրոհվում, քայքայվում են հատկապես քերականական այն ձևերը, որոնք բազմիմաստ են, կամ էլ նրանք, որոնց իմաստային նախկին սահմանները ջնջվել են, և առաջացել է իմաստային բազմաձևություն: Այսպես են վերացել հին ստորադասականի ձևերը, վերաիմաստավորվել են սահմանական հին ներկան ու անցյալ անկատարը, ձևավորվել են նոր միջոցներ՝ նոր իմաստավորումներով նաև:

Այսպես են կազմավորվել թերևս քննարկվող տարածքի վերը նշված բայաձևերը:

Սահմանական եղանակի բուն և շարունակական ժամանակաձևեր: Նախ՝ բուն և շարունակական եզրերի մասին: Աճառյանը, խոսելով սահմանական ներկայի իմաստային զանազան նրբերանգների մասին, առանձնացնում է մի դրսևորում, երբ գործողությունները, դեպքերը «... սկսվել են ներկայումս և դեռ չեն վերջացել ու շարունակվում են (տևական ներկա)»⁶: Ներկայի այս ձևը մասնավորում է գործողությունը հաղորդակցական տվյալ պահի, խոսքային տվյալ իրադրության հարաբերակցությամբ: Ուստի այս ձևի մեջ հստակեցված է գործողության կատարման որոշակի պահը, որը հաղորդակցական տվյալ իրադրությունն է: Ուստի, չշփոթելու համար ներկայի այս ձևը ընդհանրապես կատարվող՝ առանց եզրային որոշակիության (երբ է սկսվել, երբ է ավարտվելու), սկսված ու դեռ չավարտված գործողություն ցույց տվող ներկայի մյուս ձևերի հետ, նպատակահարմար ենք գտնում բուն և շարունակական անվանումները փոխարինել *բուն կամ ընդհանրական և իրադրական* անվանումներով, մասնավորապես որ քննարկվող տարածքի որոշ միավորներում շարունակական կոչվող ներկան, անցյալ անկատարը, ինչպես նաև ապառնին ձևակազմություններով ընդհանուր հատկանիշներ են դրսևորում առկայացական մյուս միջոցների հետ:

Բուն կամ ընդհանրական և իրադրական ժամանակաձևերը կիլիկյան տարածքներից տարբերակված են Սվեդիայի, Քեսաբի, Չեյթունի, Հաջընի, Մարաշի բարբառներում: Այս բոլոր բարբառներում էլ սահմանական ներկան ու անցյալ անկատարը, ինչպես և ենթադրական անցյալն ու ապառնին կազմվում են հին հայերենի ներկայի ու անկատարի և *կ* եղանակիչի բարբառային համապատասխան՝ կը/կու>գը, գա, գի, գէու, գօ ձևերի գուգադրումներով:

Այս կը եղանակիչի ծագման մասին հայերենագիտության մեջ արտահայտվել են զանազան կարծիքներ:

Այժմ գրեթե համընդհանուր ընդունելություն է գտել Ա. Այտընյանի տեսակետը: Ավելացնենք միայն, որ քննարկվող տարածքներում այս *կ* եղանակիչի համապատասխանությունները և դրա ծագումնաբանական հիմքերը լրացուցիչ փաստարկումով հիմնավորում են Այտընյանի կարծիքը: Այսպես. Սվեդիայի բարբառում (հատկապես Խտրբեկի խոսվածքում) էական բայի արժեքով հանդես է գալիս նաև *կայ>կա* բայը՝ գտնվում է, գոյություն ունի իմաստով: Իսկ բաց վերջնականի *ա*-ին համապատասխանում է *ու*-ն, որը առկայացական ձևերում հերթագայվում է *էու* երկբարբառով (կայ>կա>գու/գէու. հուս գու «այստեղ է», հուս գէու/ի⁷ «այստեղ է այն»): Հենց այս *կա>գու*-ն նաև սահմանականի ու պայմանականի եղանակիչն է,

⁶ Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. IV, Բ, Եր., 1961, էջ 95:

⁷ Այս *ի*-ի արժեքի մասին տե՛ս Գ. Հանանյան, նշվ. աշխ., էջ 64-66:

որն այդ ձևերում տարբեր ձայնավորումներով է հանդես գալիս (պայմանականում՝ միայն *զը*):

Քեյլանի բարբառի սահմանական եղանակի ներկայի ժխտական ձևերում գործառու էն *կայ>կա* պակասավոր բայի դիմավոր ձևերը՝ չ ժխտական մասնիկով: Այս բարբառում շեշտակիր *ա*-ն հերթագայվում է *օ*-ով. եղանակիչը լինում է *չը-քօմ* (կամ >գօմ>քօմ. *գ*-ի *ք* համապատասխանությունը պայմանավորված է չ-ի փոխադրեցությամբ): Եղանակիչը գործառու է դիմավոր ձևերով, որոնք դրվում են գրաբարի սահմանական ներկայի եզակի երրորդ դեմքի վրա (չըքօմ սիրե, չըքօ սիրե. չըքօնք սիրե, չըքեք սիրեք, չըքօն սիրե): Այսպես է նաև Հաջընի և Մարաշի բարբառներում: Նմանատիպ կազմություն Հր. Աճառյանը նկատում է Կեսարիայի բարբառում՝ «Չկամ կարդամ «չեմ կարդում», չկար գրեի «չէի գրում», չկաս գրեիր «չէիր գրում»»⁸: Այտրնյանը *կը<կու*-ն առաջացած է համարում *կայու* (բայ+շաղկապ) կապակցությունից, իսկ այս տարածքում այն դրսևորում է *կայ>կա>կու>գու* համապատասխանություն:

Ընդհանրական և իրադրական ժամանակաձևերը հատուկ են միայն սահմանական եղանակին: Կիլիկյան բարբառներում ժամանակային այդ դրսևորումները արտահայտվում են զանազան միջոցներով:

Սվեդիայի բարբառում *ընդհանրական* և *իրադրական* (շարունակական) հակադրությունն արտահայտվում է եղանակիչի *գու/գէու* հերթագայությամբ: Գու գարտում, գու լրսսիմ, գու պաննեմ, գու սիրիմ ձևերը նշանակում են ընդհանրապես կարդում եմ, լսում եմ, աշխատում եմ, սիրում եմ: Իսկ գէու գարտում, գէու լրսսիմ, գէու պաննեմ, գէու սիրիմ նշանակում են, որ հիմա, այս պահին այդ գործողությունների մեջ եմ:

Չեյթունի բարբառը իրադրական (շարունակական) ներկա կազմելու համար միաժամանակ գործառու է և՛ ներկայի *գօ*, և՛ ապառնիի *գու* մասնիկները՝ *գօգու*: Այսպես. բուն կամ ընդհանրական ներկա՝ *գօ* անիճիմ, *գօ* առնում, *գօ* ազադըմ, *գօ* անըլգիմ⁹ (անիժում եմ, առնում եմ, ազատում եմ, անարգում եմ), ապառնի՝ *գանի-ձիմ*¹⁰, *գանում*, *գանըլգիմ*, *գազադըմ* (անիժելու եմ, առնելու եմ, անարգելու եմ, ազատելու եմ), իրադրական ներկա՝ *գօ գանիճիմ*, *գօ գառնում*, *գօ գազադըմ*, *գօ գանըլգիմ* (հիմա, այս պահին անիժում եմ, առնում եմ, ազատում եմ, անարգում եմ): Չեյթունի բարբառում շարունակականը այս կերպ է արտահայտվում միայն ձայնավորակիզը և միավանկ բայերում: Իսկ բաղաձայնակիզը բազմավանկ բայերի ընդհանրական և իրադրական ներկաների հակադրությունը չեզոքանում է. *գօ*-ն հանդես է գալիս իբրև երկու ձևերի ընդհանուր և միակ եղանակիչ:

Մարաշի բարբառի ուսումնասիրող Գ. Հ. Գալստյանը¹¹ բարբառի եղանակային ձևերի մեջ առանձնացնում է այսպես կոչված տևողական եղանակը, կարողական ձևը և կարողականի տևողականը: Տևողական եղանակը ունի երկու ժամանակաձև՝ ներկա և անկատար անցյալ, կազմվում է խոնարհվող բայի ստորադասական ներկա և անցյալ ժամանակաձևերի և *կօ>գօ* եղանակիչի միջոցով: Արտահայտում է հաղորդակցական տվյալ պահին այդ գործողության մեջ լինելու, այդ գործողությունը կատարելու գաղափար: Այսպես. *գօ* սիրիմ, *գօ* գարտօմ, *գօ* պանդըրիմ («հրամայել, բան դնել»), *գօ* խընդօմ... բայաձևերը նշանակում են, որ հիմա, այս պահին սիրելու, կարդալու, բանդրելու (հրամայելու), խնդալու վրա եմ, կատարում

⁸ Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. IV, Բ, էջ 95:

⁹ Չեյթունի, ինչպես նաև Հաջընի ու Մարաշի բարբառներում *ր*-ն վերածվում է *յ*-ի:

¹⁰ Չայնավորից առաջ *գու*-ի ու-ն տղվում է:

¹¹ Տե՛ս Գ. Գալստյան, Մարաշ, Նյու Յորք, 1930, էջ 386-387:

են՝ այդ գործողությունը: Այս բայերի անկատար անցյալի ձևերը կլինեն գօ սիրա (-ար, -եր), գօ սիրանք (-աք, -ան), գօ գարտի (-իր, -եր), գօ գարտինք (-իք, -ին), գօ պանդրրի (-իր, -եր), գօ պանդրրինք (-իք, -ին), գօ խընդի (-իր, -եր), գօ խընդինք (-իք, -ին): Նշված ձևերը իրադրական ներկայի ու անկատար անցյալի ձևերն են, որ հեղինակն առանձնացնում է սահմանակամից և անվանում տևողական եղանակ: Այս բարբառում ևս ժամանակային որոշակիացման գործառնություն էղանականիշն է հանդես գալիս: *Կը>զը* (զի, զա)-ն հերթագայվում են *գօ*-ով: Եղանակիչի տարբեր ձայնավորումները հանդես են գալիս իբրև ձևաբանական իմաստների տարբերակիչ:

Առանձնացված ձևերի մեջ եղանականիշ արժեքով հանդես է գալիս *կարողական* ձևը, որը ևս ունի ընդհանրական և իրադրական ժամանակներ: Եղանակավորումը կատարվում է *զանալ* (<կրնալ<կարենալ) բայի խոնարհված ձևերով (ներկա և անկատար անցյալ): Ներկա ժամանակում խոնարհվող բայը հանդես է գալիս ներկայի հիմքով՝ առանց դիմաթվանիշ ձևայինների: Բացառություն է ե>ի լծողություն բայերի եզակի երրորդ դեմքը, ուր հիմքը խոնարհված բայաձևն է՝ սիրե, խիղվե, խըզդե (սիրի, նախշի, պատռի) և այլն: Կարողականի անցյալ անկատար ժամանակում խոնարհվում է նաև բայը: Ընդհանրական և իրադրական ձևերի հակադրությունն այս դեպքում ևս արտահայտվում է գօ մասնիկով: Շեշտակիր մասը միշտ եղանակիչն է, ինչպես պատվիրականի *թը՛ղ<թո՛ղ*-ը (Սվեդիա):

Այս բայաձևը արտահայտում է այնպիսի գործողություն, որ հաղորդողը համարում է այդ պահին հաստատապես հնարավոր, կարելի: Ուստի, նկատի ունենալով իմաստային այս գործառնությունը, այն կարելի է առանձնացնել իբրև եղանակային առանձին ձև: Կարողական եղանակի խոնարհման ամբողջական պատկերը հետևյալն է.

Խեղվիլ (նախշել), պարզանօլ (բարկանալ):

ԲՈՒՆ ԿԱՄ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԵՐԿԱ

| եզակի | հոգնակի |
|---------------|----------------|
| զանամ խիղվի | զանանք խիղվի |
| զանաս խիղվի | զանաք խիղվի |
| զանա խիղվե | զանան խիղվի |
| զանամ պարզանօ | զանանք պարզանօ |
| զանաս պարզանօ | զանաք պարզանօ |
| զանա պարզանօ | զանան պարզանօ |

ԲՈՒՆ ԿԱՄ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՆԿԱՏԱՐ ԱՆՅՅԱԼ

| եզակի | հոգնակի |
|----------------|------------------|
| զանի խիղվա | զանինք խիղվանք |
| զանիր խիղվար | զանիք խիղվաք |
| զանէր խիղվէր | զանին խիղվան |
| զանի պարզանի | զանինք պարզանինք |
| զանիր պարզանիր | զանիք պարզանիք |
| զանէր պարզանէր | զանին պարզանին |

ԻՐԱԴՐԱԿԱՆ ՆԵՐԿԱ

| եզակի | հոգնակի |
|----------------|-----------------|
| զօ զանամ խիղվի | զօ զանանք խիղվի |
| զօ զանաս խիղվի | զօ զանաք խիղվի |
| զօ զանա խիղվե | զօ զանան խիղվի |

| | | | |
|-----------|---------|-----------|---------|
| գօ գանսամ | պարգանօ | գօ գանանք | պարգանօ |
| գօ գանսաս | պարգանօ | գօ գանաք | պարգանօ |
| գօ գանա | պարգանօ | գօ գանան | պարգանօ |

ԻՐԱԴՐԱԿԱՆ ԱՆԿԱՏԱՐ ԱՆՑՅԱԼ

| եզակի | | հոգնակի | |
|--------------|----------|----------------|-----------|
| գօ գանի | խիդվա | գօ գանինք | խիդվանք |
| գօ գանիր | խիդվար | գօ գանիք | խիդվաք |
| գօ գանէր | խիդվէր | գօ գանին | խիդվան |
| գօ գանի | պարգանի | գօ գանինք | պարգանինք |
| գօ գանիր | պարգանիր | գօ գանիք | պարգանիք |
| գօ գանէր | պարգանէր | գօ գանին | պարգանին |

Հայերենի բարբառները ձևաբանորեն տարբերակել են նաև ընդհանրապես կատարելի և հաղորդակցային պահից անմիջապես հետո կատարելի գործողությունները, որոնք սահմանական եղանակի հարացույցներում հանդես են գալիս իբրև բուն կամ ընդհանրական և անմիջական կամ իրադրական ապառնի բաժաներով:

Հայերենի արևելյան տարածքներից Հաղորտի բարբառը սահմանական ապառնիի այս երկու դրսևերումներն արտահայտում է բուն ապառնիին *նիս* և *լնլ* բառ-մասնիկների հավելումով: Այսպես, բուն ապառնի՝ *խըմըլական ըմ*, իրադրական ապառնի՝ *խըմըլական ըմ նիս*, իրադրական անցյալ ապառնի՝ *խըմըլական ի նիս* կամ *խըմըլական ի լնլ*¹²:

Մարաշի բարբառը ապառնիի բուն և իրադրական ձևերի հակադրությունն արտահայտում է *ուգել>իզիլ* բայի սահմանական ներկայի և *պիտի>բիդէ* բառերի միջոցով: Գալստյանը սահմանական ապառնիի բիդէ-ով ձևերն անվանում է ապառնի, իսկ իզիլ-ի խոնարհված ձևերով կազմված ապառնին՝ ներկա ապառնի: Ապառնիի այս երկրորդ ձևը իրադրական ապառնին է: Սահմանական ապառնիի այս երկու ձևերի խոնարհումը հետևյալ կերպ է.

ԲՈՒՆ ԿԱՄ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՊԱՌՆԻ

| եզակի | հոգնակի | եզակի | հոգնակի |
|--------------|----------------|---------------|----------------|
| բիդէ խիդվիմ | բիդէ խիդվինք | բիդէ պարգանօմ | բիդէ պարգանօնք |
| բիդէ խիդվիս | բիդէ խիդվէք | բիդէ պարգանօս | բիդէ պարգանէք |
| բիդէ խիդվէ | բիդէ խիդվին | բիդէ պարգանօ | բիդէ պարգանօն |

ԻՐԱԴՐԱԿԱՆ ԱՊԱՌՆԻ (ըստ Գալստյանի՝ ապառնի ներկա)

| եզակի | հոգնակի | եզակի | հոգնակի |
|--------------|----------------|---------------|----------------|
| գիզիմ խիդվի | գիզինք խիդվի | գիզիմ պարգանօ | գիզինք պարգանօ |
| գիզիս խիդվի | գիզիք խիդվի | գիզիս պարգանօ | գիզիք պարգանօ |
| գիզէ խիդվէ | գիզին խիդվի | գիզէ պարգանօ | գիզին պարգանօ |

Հաջընի և Չեյթունի բարբառներում ևս բուն կամ ընդհանրական և իրադրական ապառնիների հակադրությունն արտահայտվում է *բըդը* (Չթ.)/ *բի* (Հճ.) բառ-մասնիկի և *ուզիլ* (Չթ.)/ *ուզիէլ* (Հճ.) (<ուգել) բայի սահմանական ներկայի միջոցով:

¹² Տե՛ս Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Եր., 1953, էջ 183:

Հաջրնի *ուզիտի*-ի խոնարհված ձևերին հարադրվում է նաև *էյ* (<էր) մասնիկը: Երկու դեպքում էլ *սյխտի*-ն և *ուզիտի*-ը դրվում են ստորադասական ներկայի ձևերի վրա¹³: Այսպես.

ԲՈՒՆ ԿԱՄ ԸՆԴ-ՀԱՆՐԱԿԱՆ ԱՊԱՌՆԻ

| | եզակի | հոգնակի |
|-----------|--|--|
| Չեյթուն - | բըղը սիյիմ բըղը սիյիս բըղը սիյե | բըղը սիյիմք բըղը սիյեք բըղը սիյին |
| Հաջրն - | բի սիյիմ (բի սիյիեմ) ¹⁴ բի սիյիս (բի սիյիես) բի սիյի (բի սիյիե) | բի սիյիմք (բի սիյիեմք) բի սիյիք (բի սիյիեք) բի սիյին (բի սիյիեն) |

ԻՐԱԴՐԱԿԱՆ ԱՊԱՌՆԻ

| | եզակի | հոգնակի |
|-----------|--|---|
| Չեյթուն - | գուզիմ սիյի գուզիս սիյի գուզե սիյի | գուզիմք սիյի գուզեք սիյի գուզին սիյի |
| Հաջրն - | գուզիեմ էյ սիյիմ գուզիես էյ սիյիս գուզիե էյ սիյի | գուզիեմք էյ սիյիմք (գավզիեմ սիյիեմ գավզիեմք էյ սիյիեմք) ¹⁴ գուզիեք էյ սիյիք (գավզիես սիյիես գավզիեք էյ սիյիեք) գուզիեմ էյ սիյիմ (գավզիե սիյե գավզիեմ էյ սիյիեն) |

Պատվիրական հրամայական: Ստորադասականի հետ գուզորդվում է նաև *թո՛ղ* (>թըղ) բառ-մասնիկը, որը Սվեդիայի բարբառում ձևավորում է հրամայականի պատվիրական ձևը: Այս բարբառում *թողուլ* բայի բուն հրամայականի ապառնին ունի *թո՛ղ-թողը՛կ* (<թո՛ղ-թողե՛ք) ձևը: Իբրև եղանականիշ՝ մաշվելով դարձել է *թըղ, մի՛*՝ արգելական մասնիկի նման *թըղ*-ով հրամայականի ժխտական ձևերում շեշտը կայունացել է սկզբից երկրորդ վանկի վրա (մը գա՛րտուր, թըղ չը՛գարտու), գործառու է *միայն* երրորդ դեմքի բայաձևերի հետ: Այստեղ ևս խոսքի ուղղվածությունը խոսակցին, հաղորդակցին է հանգում, միայն թե այս դեպքում հաղորդակիցը հաղորդողի կամքի, ցանկության փոխանցողն է մի երրորդ անձի, որը գործողության բուն իրացնողն է: Այստեղ գործողների մասնակցելիությունը գործողությանը մեկ անդամով ավելանում է:

Այս *թըղ* մասնիկը, ստորադասական ներկայի I և II դեմքերի ձևերին հարադրվելով, ըղձական-հրամայական եղանակային հակադրություններ չի ստեղծում, գործառու է ստորադասական անցյալի երեք դեմքերի հետ էլ հավասարապես և հանդես է գալիս իբրև վերաբերական բառ, ինչպես *երանի՛*՝ վերաբերականը:

Պատմողական եղանակ¹⁵: Կիլիկյան բարբառներում և ընդհանրապես հայերենի արևմտյան տարածքներում ձևավորվել է բայական մի յուրահատուկ եղանակավորում, որով հաղորդողը իր թերահավատությունը, կասկածանքը, հեզմանքը,

¹³ Տե՛ս Հ. Պողոսյան, Հաջրնի ընդհանուր պատմություն, Լոս Անջելես, 1942, էջ 292-295:

¹⁴ Փակագծերում նշված ձևերը տրվում են ըստ Հ. Գասպարյանի «Հաջրնի բարբառը» ուսումնասիրության (էջ 127):

¹⁵ Տե՛ս Հ. Բճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. IV, Բ, էջ 245:

անվատահոությունն է հայտնում մի գործողության հանդեպ, որի մասին լսել է ուրիշից: Եղանակային այս ձևը կազմվում է շինել բայի վաղակատար ներկայի՝ եղեր է, և բայի խոնարհված բոլոր ձևերի հարադրմամբ: Կիլիկյան բարբառներում եղեր է եղանակիչ բառն ունի հետևյալ արտահայտությունները. Սվ. > իղէյր, Ջթ. էղիյէ, Մշ. աղի, Ջսբ. ըղիէրի/ըղիր:

Սվեդիայի բարբառում սահմանական եղանակի վաղակատար ներկա և վաղակատար անցյալ բայաձևերը գործառում են միայն եղեր է>իղէյր բայի հետ, որը եղանակիչի արժեք է ստացել և կազմում է սահմանականի չեզոք իմաստներից տարբերվող մի նոր բայաձև՝ նոր եղանակավորումով: Օրինակ՝ կըրէյր՝ձ իղէյր ... ասում են, իբր թե՝ գրել է այն, բայց հաղորդողը չգիտի, հավատացած չէ, չի կարծում, որ իրապես կատարվել է գործողությունը:

Ուստի կարելի է այն առանձնացնել ընդհանրապես պատմողական եղանակավորումից, որը եղեր է բայի բառիմաստով ու հատուկ հնչերանգով է արտահայտվում:

Պատմողական եղանակը Սվեդիայի բարբառում ունի վաղակատար ներկա և վաղակատար անցյալ ժամանակաձևեր:

Խոնարհման պատկերը հետևյալն է.

ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԿԱ

| եզակի | | հոգնակի | |
|--------------|-------|----------------|-------|
| կըրէյրն | իղէյր | կըրէյրնկ | իղէյր |
| կըրէյրս | իղէյր | կըրէյրքկ | իղէյր |
| կըրէյրի | իղէյր | կըրէյրն | իղէյր |

ՎԱՂԱԿԱՏԱՐ ԱՆՅՅԱԼ

| եզակի | | հոգնակի | |
|--------------|-------|----------------|-------|
| կըրէյրըօր | իղէյր | կըրէյրըրայրնկ | իղէյր |
| կըրէյրըէր | իղէյր | կըրէյրըրայրքկ | իղէյր |
| կըրէյրըր | իղէյր | կըրէյրըրայրն | իղէյր |

Այսպիսով. կիլիկյան բարբառներում առկա են բայական ձևեր, որոնք հետգրաբարյան գոյացություններ են: Սահմանականի հարացույցներում դրանք ներկայի, անկատար անցյալի և ապառնիի իրադրական ձևերն են, հրամայականի պատվիրական, Հաջընի, Մարաշի բարբառների կարողական եղանակը, Սվեդիայի պատմողականը:

Г. К. ГАНАНЯН — Постграбарные глагольные формы в киликийских диалектах. — В статье представлены и описаны глагольные формы, возникшие в киликийских диалектах в период постграбара, а также особенности их образования. В парадигме изъявительного наклонения это ситуативные формы настоящего, несовершенного прошедшего и будущего, пермиссивный императив, потенциальное наклонение диалектов Аджна, Мараша и повествовательное наклонение Сведии.